ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2025 թվականի N 76-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՑՈՂԱՄԱՐԳ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-112-0110-0038 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ (ՈՉԽԱՐԱՆՈՑ) ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով և հիմք ընդունելով «Մաքս Վին Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված N 210424 գույքի գնահատման հաշվետվությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը համարվող, 08-112-0110-0038 կադաստրային ծածկագրով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ցողամարգ բնակավայրի 2-րդ փողոց, 33/1 հասցեի 0,102 հեկտար մակերեսով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը և դրա վրա առկա շինությունը (ոչխարանոց) առավել արդյունավետ պահպանելու, բարելավելու և նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու նպատակով, աճուրդի միջոցով օտարելու մասին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկությանը և հայտարարել աճուրդ:
2. Անշարժ գույքի օտարման մեկնարկային գինը սահմանել 455000 (չորս հարյուր հիսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ներառում է 0,102 հեկտար մակերեսով հողամասի կադաստրային արժեքը:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով կազմակերպել և անցկացնել անշարժ գույքերի աճուրդի միջոցով օտարելու աճուրդը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ (15) **Դեմ՝ (0)** **Ձեռնպահ՝ (0)**

ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ձ.

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա.

ՄԱՆՈՒԿՅԱՆ Կ.

ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՇԱԲՈՅԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«23» դեկտեմբերի 2025 թվականի
գյուղ Աշոցք